ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵԴ - 07 - 2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» «03» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ կազմակերպություն), տնօրեն Վլադիմիր Գևորգյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 2511-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» միջոցառման շրջանակներում դրամաշնորհի հատկացման մրցույթի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 26-ի նիստի 03 արձանագրությունը՝ որոշման «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11003. ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» միջոցառման «Գավառը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված 9824.4 հազար (ինը միլիոն ութ հարյուր քսանչորս հազար չորս հարյուր) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ծրագրի նկարագիրը՝ Հավելված N 3-ում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով

թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.10. սույն պայմանագրի 7.1-ին կետով սահմանված ժամկետներում պաշտոնական գրությամբ պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 4-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝

էլեկտրոնային կրիչներով՝ համաձայն հավելված N 5-ի: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է *www.minfin.am* հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (Հավելված N 6) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և

կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում սահմանված գումարի 80%-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.2. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4.Սույն պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող են հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2024 թվականի դեկտեմբերի 11-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, բայց ոչ ուշ, քան դեկտեմբերի 13-ը:

7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.3.Սույն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմի

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով

փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2.Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինն այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2	ք. Ստեփանավան, Չարենցի 179-28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Ինեկոբանկ ՓԲԸ, Հ/Հ 2050022589731001
Հ/Հ 900011032704,	ՀՎՀՀ 06952546
ՀՎՀՀ 02698732	gevorgianconcern@gmail.com
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Հ. Հակոբյան	Վ. Գևորգյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 25 » « 03» 2024 թ.
ԵԴ- 07 -2024 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/հ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	Անվանումը	Նկարագիրը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	Պահանջվող գումարը (հազ. դրամ)
1.	Բացման և փակման արարողություններ	Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման և փակման արարողությունների կազմակերպում	• Բացման և փակման արարողությունների ժամանակ Մրցույթի հանձնաժողովի, փորձագիտական գնահատման խմբի անդամների, ՀՀ ԿԳՄՄՆ և ՋԼՄ ներկայացուցիչների տեղափոխում Գավառ քաղաք (յուրաքանչյուր դեպքում՝ ընդհանուր 20 մարդ, 2 տարբեր տրանսպորտային միջոցներով, երթուղի՝ Երևան-Գավառ-Երևան), • Համերգային/գեղարվեստական ծրագրերի կազմակերպում • 2-3 րոպե տևողությամբ հաշվետու 2 տեսահոլովակի պատրաստում և հանրայնացում, • 2 միջոցառումների լուսա- ու տեսանկարահանում և մոնտաժ • 2 միջոցառումների ընթացքում հյուրասիրության կազմակերպում	Իրականացված են բացման և փակման միջոցառումները, հյուրասիրությունը կազմակերպված է: Նկարահանումը կազմակերպված է: Մասնակիցների տեղափոխումն իրականացված է: Հաշվետու 2 տեսահոլովակները պատրաստված են: 200 մշակված լուսանկարները ներկայացված են:	Բացման արարողություն – 10.04.2024 թ. Փակման արարողություն - 10.12.2024թ.	Համաձայն Մրցույթի հրավերով սահմանված ձևաչափի	3000,0
2.	Գովազդային նյութերի և պաստառների տպագրություն	«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք» միջոցառման թեմատիկ պաստառների, բուկլետների և շնորհակալագրերի պատրաստում	• Գովազդային նյութերի տպագրություն (կրծքանշան, դրոշակ և այլն) բացման և փակման արարողությունների համար, • «Գավառը՝ ՀՀ 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք» տպագրությամբ roll-up բաններների, 8 հատ 3մ x 6մ գովազդային պաստառների դիզայն և տպագրություն, • Շնորհակալագրերի տպագրություն (A4 ֆորմատ -15 հատ), • 3-4 րոպե տևողությամբ	Գովազդային նյութերը (կրծքանշան, դրոշակ՝ 400 հատ) տպագրված են և բաշխված միջոցառումների ժամանակ: roll-up բաններներն առկա են միջոցառումների ժամանակ, պաստառները փակցված են համայնքում: 15 հատ	10.12.2024թ	Համաձայն Մրցույթի հրավերով սահմանված ձևաչափի	900.0

			հաշվետու տեսաֆիլմի պատրաստում և հանրայնացում	շնորհակալագրերը բաշխված են միջոցառումների ժամանակ: Հաշվետու տեսաֆիլմը պատրաստված է:			
3.	Բանախոսությունների շարք-միջոցառման կազմակերպում	Միջոցառման ընթացքում բանախոսությունների կազմակերպում, բանախոսների տեղափոխում	• Բանախոսությունների հարթակների ընտրություն, • Գեղարքունիքի մարզի համայնքներից և բնակավայրերից 100 մասնակիցների տեղափոխում միջոցառման վայր և հետադարձ ուղղությամբ 10 տրանսպորտային միջոցներով, • Հյուրասիրության կազմակերպում	Իրականացված է բանախոսությունների շարքը: Հյուրասիրությունը կազմակերպված է:	27.04.2024թ.	Համաձայն Մրցույթի հրավերով սահմանված ձևաչափի	612.0
4	«Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքների գնահատում, SMS քվեարկություն	Փորձագիտական գնահատման խմբի այցելությունների կազմակերպում, աշխատանքային օրակարգի կազմում, SMS քվեարկության կազմակերպում	• Փորձագիտական խմբի 5 անդամի ուղևորափոխադրում «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներ, կեցության (ըստ անհրաժեշտության) և սննդի կազմակերպում, • Համայնքներում աշխատանքային օրակարգերի կազմում և համակարգում, • Կարճ հաղորդագրությամբ SMS քվեարկության մասին 20-30 վայրկյան տևողությամբ տեսահոլովակի պատրաստում և հանրայնացում, • Հաղթող քաղաքի մասին պատմող տեսահոլովակի պատրաստում և հանրայնացում, • Մրցույթի հանձնաժողովի ամփոփիչ նիստի ժամանակ հյուրասիրության կազմակերպում	Փորձագիտական խմբի այցելություններն իրականացված են, առկա են փորձագիտական զեկույցները: SMS քվեարկությունը կազմակերպված է: Երկու տեսահոլովակները պատրաստված են և տարածված մեդիա հարթակներով: Հյուրասիրությունը կազմակերպված է:	30.09.2024թ.	Համաձայն Մրցույթի հրավերով սահմանված ձևաչափի	1500.0
5	Երիտասարդների շրջանում կախվածությունների դեմ իրազեկման միջոցառման և մոտիվացիոն հանդիպում-պանելային քննարկման կազմակերպում	Երիտասարդների շրջանում կախվածությունների դեմ իրազեկման միջոցառման կազմակերպում Մոտիվացիոն հանդիպում-պանելային քննարկումների կազմակերպում	• Երկու միջոցառումների համար հարթակների ընտրություն, կահավորում, անհրաժեշտ տեխնիկայով ապահովում, • Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ մասնագետների և բանախոսների ընտրություն, տեղափոխման կազմակերպում Երևան-Գավառ-Երևան ուղղությամբ, ինչպես նաև՝ Գավառ քաղաքում ներքաղաքային տեղափոխության ապահովում,	Կախվածությունների դեմ իրազեկման ծրագիրն իրականացված է: Հյուրասիրությունը կազմակերպված է: Մոտիվացիոն հանդիպում-պանելային 3 քննարկումներն իրականացված են:	30.09.2024թ.	Համաձայն Մրցույթի հրավերով սահմանված ձևաչափի	800.0

			• Երկու միջոցառումների ընթացքում հյուրասիրությանն կազմակերպում, • «Գավառը՝ ՀՀ 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք» տարբերանշանով 10 հուշանվերի պատրաստում, • Երկու միջոցառումների բոլոր մասնակիցներին խրախուսական նվերների տրամադրում:	10 խրախուսական նվերները բաշխված են: Մոտիվացիոն հանդիպում-պանելային քննարկումների բոլոր մասնակիցներին խրախուսական նվերները տրամադրված են:			
	Ընդամենը միջոցառումներ						6812.0
	Ընդամենը աշխատավարձ						1375.0
	Ընդամենը ծախսեր						**8187.0**
	ԱԱՀ						**1637,4**
	Ընդամենը						**9824.4**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032704, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 179-28
ՀՎՀՀ՝ 06952546
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 2050022589731001
Էլ.փոստ՝ gevorgianconcern@gmail.com
Տնօրեն՝
Վ. Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-07-2024 պայմանագրի

ՖԻՆԱՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Գավառը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի

	Ծախսատեսակի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Աշխատավարձ (ներառյալ հարկերը)* և ծառայություն**				
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	8.5	100.0	850.0
1.2	Ծրագրի հաշվապահ	ամիս	8.5	50.0	425.0
1.3	Գնումների համակարգող	հատ	1	100.0	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 1				**1375.0**
2	**Ծրագրային ծախսեր՝ այդ թվում**				
	Բացման և փակման արարողությունների կազմակերպում՝ այդ թվում				***3000.0***
2.1	Տրանսպորտային ծառայություն բացման արարողության համար՝ Երևան-Գավառ-Երևան (20 մարդ, 2 մեքենա)	հատ	1	125.0	125.0
2.2	Համերգային ծրագրի ծառայություն բացման արարողության ժամանակ	հատ	1	1100.0	1100.0
2.3	Համերգային ծրագրի ծառայություն փակման արարողության ժամանակ	հատ	1	1100.0	1100.0
2.4	Լուսանկարահանման և տեսանկարահանման ծառայություններ բացման և փակման արարողությունների ժամանակ (2 տեսահոլովակ և 200 լուսանկար)	հատ	2	200.0	400.0
2.5	Տրանսպորտային ծառայություն փակման արարողության համար՝ Երևան-Գավառ-Երևան (20 մարդ, 2 մեքենա)	հատ	1	125.0	125.0
2.6	Ֆուրշետի կազմակերպման ծառայություն բացման և փակման արարողությունների համար (25 մարդ x 2 օր x 3.0 դրամ)	հատ	2	75.0	150.0
	Գովազդային ծառայություններ՝ այդ թվում				***900.0***
2.7	Կրծքանշանի, դրոշակի ձեռքբերում, 400 հատ x 0.5 հազ. դրամ	հատ	1	200.0	200.0
2.8	Roll-up բաններների դիզայն և տպագրություն, 85 սմ x 200 սմ, 30 հատ x 10.0 հազ. դրամ	հատ	1	300.0	300.0
2.9	Պաստառների տպագրություն՝ 3 մ x 6 մ, 8 հատ x 31.25 հազ. դրամ	հատ	1	250.00	250.0
2.10	Շնորհակալագրերի տպագրություն՝ A4 ֆորմատի, 15 հատ x 0.67 հազ. դրամ	հատ	1	10.00	10.0

2.11	Տեսաֆիլմի պատրաստում և հանրայնացում (3-4 րոպե)	ծառայություն	1	140.0	140.0
	Բանախոսությունների շարք միջացառման կազմակերպում՝ այդ թվում				***612.0***
2.12	Տրանսպորտային ծառայություն՝ Գեղարքունիքի մարզի քաղաքներից և գյուղերից տեղափոխում միջոցառման վայր և հակառակ ուղղությամբ (100 մարդ)	հատ	1	362.0	362.0
2.13	Ֆուրշետի կազմակերպման ծառայություն 100 մարդու համար	հատ	1	250.0	250.0
	« Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքների գնահատման կազմակերպում՝ այդ թվում՝				***1500.0***
2.14	Տրանսպորտային ծառայություն (փորձագիտական խումբ, 3 քաղաք)	հատ	1	150.0	150.0
2.15	Հյուրանոցային ծառայություն (5 մարդ x 3 օր x 20.0 հազ. դրամ) և սնունդ՝ (5 մարդ x 3 օր x 5.0 հազ. դրամ)	հատ	1	375.0	375.0
2.16	Տեսահոլովակի պատրաստում և հանրայնացում (20-30 վայրկյան, 1 ամիս)	ծառայություն	1	400.0	400.0
2.17	Տեսահոլովակի պատրաստում և տարածում առցանց հարթակներով (հաղթող քաղաքի մասին, 12-15 րոպե)	ծառայություն	1	500.0	500.0
2.18	Ֆուրշետի կազմակերպման ծառայություն 25 մարդու համար	հատ	1	75.0	75.0
	Երիտասարդության շրջանում կախվածությունների դեմ իրազեկման միջոցառման և մոտիվացիոն հանդիպում-պանելային քննարկման կազմակերպում՝ այդ թվում				***800.0***
2.19	Կախվածության դեմ իրազեկման միջոցառումների ընթացքում հանդիպումների կազմակերպման ծառայություն (3 մարդ x 3 օր)	հատ	1	70.00	70.0
2.20	Տրանսպորտային ծառայություն Երևան-Գավառ-Երևան)	հատ	1	40.0	40.0
2.21	Մոտիվացիոն հանդիպման- պանելային քննարկման կազմակերպման ծառայություն (3 հանդիպում x 50.0 հազ. դրամ)	հատ	1	150.0	150.0
2.22	Տրանսպորտային ծառայություն Երևան-Գավառ-Երևան	հատ	1	40.0	40.0
2.23	Ֆուրշետի կազմակերպման ծառայություն 120 մարդու համար	հատ	1	300.0	300.0
2.24	Հուշանվերներ՝ ապակուց, միջոցառման խարհրդանիշի 3D փորագրությամբ	հատ	10	10.0	100.0

2.25	Խրախուսական նվերների ձեռքբերման ծառայություն (300 գրիչ x 0.1 հազ. դրամ, 300 նոթատետր x 0.233 հազ. դրամ)	հատ	1	100.0	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 2				**6812.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**8187.0**
	ԱԱՀ**				**1637.4**
	ԱՄԲՈՂՋԸ				**9824.4**

* Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032704, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 179-28
gevorgianconcern@gmail.com
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20500225897310001, ՀՎՀՀ 06952546
Տնօրեն՝ _____ Կ. Գևորգյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«25» «03» 2024 թ.
ԵԴ- 07 -2024 պայմանագրի

«ԳԱՎԱՌԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ»
դրամաշնորհային ծրագիր

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը	«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ
Հապավումը (եթե առկա է)	
Ծրագրի անվանումը	**«Գավառը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք»**
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)[1]	**25.03.2024 - 10.12.2024**
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք)	**ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք**
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ)	**Վլադիմիր Գևորգյան** **էլ. հասցե՝ gevorgianconcern@gmail.com** **Հեռ.՝ +374 33 00 87 87**
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ)	**Էլեն Սանդալջյան,** **էլ. հասցե՝ conceptеventsarmenia@gmail.com** **Հեռ.՝ +374 93 10 77 22**
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ.փոստ)	**Հասցե՝ ք. Ստեփանավան, Չարենցի 179-28** **էլ. հասցե՝ gevorgianconcern@gmail.com** **Հեռ.՝ +374 33 00 87 87**
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)	**9,824,400 (Ինը միլիոն ութ հարյուր քսանչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ**

Համառոտագիր

Ներկայացրեք ծրագրի ամփոփ նկարագիրը:

«Գավառը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվելու են մի շարք միջոցառումներ Գավառ համայնքում:

Մասնավորապես՝

1. Կազմակերպվելու է Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողություն:
2. Իրականացվելու է «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի փորձագիտական գնահատման խմբի այցելությունները «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներ:
3. Գավառ համայնքի երիտասարդների ներգրավմամբ կազմակերպվելու է բանախոսությունների շարք՝ ուղղված երիտասարդների հայրենաճանաչության բարձրացմանը կամ երիտասարդությանը հուզող այլ թեմաներով:
4. Կազմակերպվելու է Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողություն:

---

[1] **Ծրագրի մեկնարկը՝ 2024 թվականի բյուջետային տարվա առաջին եռամսյակից: Ծրագրի իրականացման և հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի առաջին տասնօրյակը:**

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

«Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) իրականացվում է 2014 թվականից ի վեր: Մրցույթի մասնակիցներն են ՀՀ քաղաքային համայնքները կամ քաղաքային համայնքների մեջ մտնող առանձին քաղաքները:

Մրցույթի նպատակներն են՝

1) Աջակցել մարզային երիտասարդական կյանքի ակտիվացմանը, երիտասարդների կարողությունների բացահայտմանը և համակողմանի զարգացմանը՝ որպես Հայաստանի Հանրապետության ակտիվ և պատասխանատու քաղաքացիների ինքնադրսևորմանն ու կայացմանը.

2) Խթանել տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) կողմից երիտասարդական քաղաքականության ոլորտում իրականացվող աշխատանքների և ծրագրերի ծավալների մեծացմանը.

3) Նպաստել համայնքային երիտասարդական ենթակառուցվածքների ստեղծմանը և զարգացմանը (համայնքային երիտասարդական կենտրոններ (միջավայրեր), քաղաքացիական հասարակության կառույցներ (այսուհետ՝ ՔՀԿ) և այլն).

4) Նպաստել միջհամայնքային երիտասարդական կենտրոնների (միջավայրերի) ցանցի ստեղծմանն ու համագործակցության զարգացմանը.

5) Խրախուսել տեղական երիտասարդական աշխատանքի ձևավորումն ու զարգացումը, երիտասարդական նորարարական գաղափարների կյանքի կոչումը, օժանդակել միջազգային համագործակցության հաստատմանն ու զարգացմանը:

Գավառ համայնքը հռչակվել է 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք:

Ծրագրով առաջարկվող միջոցառումները ուղղված են լինելու գավառեցի երիտասարդների կյանքի ակտիվացմանը, համայնքում երիտասարդների կարողությունների բացահայտմանը և համակողմանի զարգացմանը:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

Կազմակերպությունը վերջին 2 տարիների ընթացքում իրականացրել է բազմաթիվ միջոցառումներ, որոնցից կառանձնացնենք՝

1. 2023 թվականին «Քայլ դեպի տուն» ծրագրի կամզկերպում և իրականացում:
Պատվիրատու՝ ՀՀ Վարչապետի աշխատակազմ (ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ)
Մասնակիցների թիվը՝ 600
2. 2023 թվականին «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի կազմակերպում և իրականացում: Միջոցառումը իրականացվել է համաձայն՝ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի կողմից հաստատված համապատասխան Կանոնակարգի: Մասնակիցների թիվը՝ շուրջ 500:
3. 2022 թվականին «ՆԵՐՈՒԺ 3.0» ծրագրի կազմակերպում և իրականացում
Պատվիրատու՝ ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Մասնակիցների թիվը՝ 150
4. 2022 թվականին «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի կազմակերպում և իրականացում: Միջոցառումը իրականացվել է համաձայն՝ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարի կողմից հաստատված համապատասխան Կանոնակարգի: Մասնակիցների թիվը՝ 450:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

Ծրագրի նպատակն է նպաստել 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքում երիտասարդների կյանքի ակտիվացմանը, համայնքում երիտասարդների կարողությունների բացահայտմանը և համակողմանի զարգացմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողություն,
2. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի փորձագիտական գնահատման խմբի այցելությունների կազմակերպում «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներ՝ տեղերում ուսումնասիրությունների միջոցով հայտերի փորձագիտական գնահատման նպատակով,
3. SMS քվեարկության կազմակերպում,
4. Բանախոսությունների շարք հայրենաճանաչության, երիտասարդության թեմաներով՝ Գավառ համայնքի երիտասարդների ներգրավմամբ,
5. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողություն:

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան ՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն՝	«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ
Ծրագիր՝	**«Գավառը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք»**
Ժամանակահատված՝	**25.03.2024 - 10.12.2024**

1. 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողության միջոցառումը ներառելու է Մրցույթի հանձնաժողովի, փորձագիտական գնահատման խմբի անդամների, ԿԳՄՍՆ ներկայացուցիչների տեղափոխումը Գավառ քաղաք (ընդհանուր 20 մարդ), Հավաստագրի տպագրությունը, Համերգային / գեղարվեստական ծրագրի կազմակերպումը, գովազդային նյութեր (կրծքանշան, դրոշակ և այլն) պատրաստումը, «Գավառը՝ Հայաստանի Հանապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք» տպագրությամբ roll-up բանների դիզայնը և տպագրությունը, 2-3 որպե տևողությամբ հաշվետու տեսաֆիլմի պատրաստումը և հանրայնացումը, 8 հատ 3մ x 6մ չափսի պաստառի տպագրությունն ու Գավառի համայնքապետարանի աջակցությամբ տվյալ պաստառների տեղադրումը Գավառ քաղաքում, համայնքի այլ բնակավայրերում, քաղաքի մուտք տանող մայրուղում և տարբեր տեսարժան վայրերում:

2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողություն անցկացման վայրը (դահլիճը), ինչպես նաև համերգային միջոցառման սցենարը կքննարկվի ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդության հարցերի վարչությանը հետ:

Բացման արարողության ողջ ընթացքում կիրականացվեն տեսա և լուսանկարահանումներ:

2. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի փորձագիտական գնահատման խմբի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներ այցելությունների կազմակերպման շրջանակներում փորձագիտական խմբի անդամները տեղերում իրականացնելու են հայտատու քաղաքների ուսումնասիրությունները: Իրականացվելու է փորձագիտական խմբի առավելագույնը 5 անդամի ուղևորափոխադրում «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներ, կեցության (ըստ անհրաժեշտության) և սննդի կազմակերպումը: Այցելությունների հստակ ժամկետները և վայրերը կքննարկվի ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդության հարցերի վարչության հետ:

3. Հայտատու քաղաքների գնահատումից հետո իրականացվելու է 20 օր տևողությամբ կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկության կազմակերպումը, 1 SMS-ի արժեքը կկազմի առավելագույնը 50 դր.: Կպատրաստվի նաև կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկության մեկնարկը ազդարարող 20-30 վայրկյան տևողությամբ տեսահոլովակ, որը կհանրայնացվի առցանց հարթակներով: Հաղթող քաղաքի մասին պատմող տեսահոլովակը կներկայացվի նաև Մրցույթի հանձնաժողովի ամփոփիչ նիստի ժամանակ, որի ժամանակ կլինի նաև հյուրասիրություն (քաղցրավենիք և խմիչք)՝ նախատեսված 25 անձի համար: SMS քվեարկության կազմակերպման և հաղթող քաղաքի մասին պատմող տեսահոլովակ պատրաստման կոնկրետ ժամկետները կքննարկվի ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդության հարցերի վարչության հետ:

4. Բանախոսությունների շարքի կազմակերպման ժամկետների և վայրի, բանախոսությունների թեմաների վերաբերյալ հստակություն ստանալու նպատակով մեր թիմը կքննարկի ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդության հարցերի վարչության հետ և ըստ ձեռք բերված պայմանավորվածության կիրականացվի Գավառ համայնքի այլ բնակավայրերից մասնակիցների տեղափոխումը միջոցառման վայր: Միջոցառման հանրայնացումն ապահովելու նպատակով հանդիպումների ողջ շարքը կտեսանկարահանվի և կլուսանկարահանվի:

5. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողություն կազմակերպման շրջանակներում կիրականացվի Մրցույթի հանձնաժողովի, փորձագիտական խմբի անդամների, ԿԳՄՍՆ ներկայացուցիչների տեղափոխումը Գավառ քաղաք (ընդհանուր 20 մարդ): Կկազմակերպվի համերգային / գեղարվեստական ծրագիրը, կհանձնվեն ընդհանուր թվով 15 շնորհակալագրեր: Փակման արարողության ժամանակ դահլիճում էկրանին կցուցադրվի նաև 3-4 րոպե տևողությամբ հաշվետու տեսաֆիլմը, որը կներկայացնի 2024 թվականի ընթացքում Գավառում իրականացված երիտասարդական միջոցառումների շարքը: Փակման արարողության հյուրերին կբաժանվեն համապատասխան գովազդային նյութեր (կրծքանշան, դրոշակ և այլն): Փակման արարողություն ևս կտեսանկարահանվի և կլուսանակարահանվի: Փակման արարողության անցկացման վայրը (դահլիճը), ինչպես նաև համերգային միջոցառման սցենարը կքննարկվի ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդության հարցերի վարչությանը հետ:

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողություն	Էլեն Սանդալջյան Կատարող կազմակերպություն												
2	«Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի փորձագիտական գնահատման խմբի այցելությունների կազմակերպում «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի հայտատու քաղաքներ	Էլեն Սանդալջյան Կատարող կազմակերպություն												
3	SMS քվեարկության կազմակերպում	Էլեն Սանդալջյան												

		Կատարող կազմակերպություն												
4	Բանախոսությունների շարք	Էլեն Սանդալջյան Կատարող կազմակերպություն												
5	Հայաստանի Հանրապետության 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման արարողություն	Էլեն Սանդալջյան Կատարող կազմակերպություն												

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ովքեր են ծրագրի ուղղակի շահառուները: Նկարագրեք ծրագրի շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին և նրանց ներգրավվածությունը ծրագրում:

Ծրագրի ուղղակի շահառուներն են Գավառ համայնքի երիտասարդները, երիտասարդական նախաձեռնող խմբերը և երիտասարդական կազմակերպությունները:

Ծրագրի անուղակի շահառուները Գավառ համայնքի ողջ բնակչությունն է:

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը:

Ծրագրի ռիսկերի գնահատման հետ կապված կարևոր ենք համարում շեշտել, որ մեր կազմակերպությունը ունի մասսայական միջոցառումների իրականացման բավականին լավ փորձառություն և առաջացած ցանկացած խնդիրների դեպքում պատրաստ է արագ կողմնորոշվել և ըստ ստեղծված իրավիճակի առաջարկել այլընտրանքային լուծումներ:

Ծրագրի աշխատակազմը

Նկարագրել ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը՝ համաձայն աղյուսակի և կցել կենսագրականները՝.

Հ/Հ	Անուն, ազգանուն	Դերը/պատասխանատվության շրջանակը ծրագրում	Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը
1.	Էլեն Սանդալջյան	Ծրագրի ղեկավար	Էլեն Սանդալջյանը ունի 5 տարվա փորձառություն երիտասարդական, մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերման ոլորտում:
2.	Յուրի Վարդանյան	Ծրագրի հաշվապահ	Յուրի Վարդանյանը հաշվապահության ոլորտում ունի 12 տարվա փորձառություն՝ պետական և մասնավոր կազմակերպություններում:

3.	Հայկ Ղազարյան	Գնումներ համակարգող	Հայկ Ղազարյանը պետական գնումների կազմակերպման ոլորտում ունի բազմամյա տարիների փորձ: Հայկ Ղազարյանը աշխատել է, ինչպես պետական հիմնարկություններում, այնպես էլ մասնավոր ընկերություններում ու համակարգել գնումների գործընթացը:

Հանրահռչակում և Ծրագրի տեսանելիության բարձրացմանն ուղղված քայլեր

Ներկայացնել Ծրագրի հանրայնացման և մարքեթինգային գործողությունների պլանը, միջոցառումների ընթացքի և արդյունքների լուսաբանման եղանակները:

Ծրագրի ողջ ընթացքը տեսանկարահանվելու և լուսանկարահանվելու է: Ծրագրի հանրահռչակումը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով ծրագրի բոլոր փուլերի՝ և՛ մեկնարկի և՛ ընթացքի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է տարածվելու ինչպես կազմակերպության էջերով, սոցիալական ցանցերով, այնպես էլ ՀՀ ԿԳՄՍ նախարարության www.erit.am էլեկտրոնային պորտալով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032704, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 179-282
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022589731001, ՀՎՀՀ 06952546
gevorgianconcern@gmail.com
Տնօրեն՝
Վ. Գևորգյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 4
«25» «03» 2024 թ.
N ԵԴ - 07-2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Փաստաթղթերն ընդունեց՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված 5
«25» «03» 2024 թ.
ԵԴ- 07 -2024 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«ԳԱՎԱՌԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ»
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

2.6 Խնդրում ենք նշել, ծրագրի ազդեցության վերլուծություն՝ նշելով ծրագրին մասնակից երիտասարդների թիվը,

2.7 միջոցառմանն ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց թվաքանակը,

2.8 միջոցառման իրականացման տարածքային ընդգրկվածությունը,

2.9 միջոցառման արդյունքի հասանելիությունը տարբեր հարթակներում,

2.10 մասնակիցների գոհունակությունը ծրագրի արդյունքներից,

2.11 ծրագրի իրականացման ընթացքում ստեղծված կայուն արժեքները,

2.12 ծրագրի շրջանակներում օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ֆինանսական ծախսերը

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032704, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 179-282
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022589731001, ՀՎՀՀ 06952546
gevorgianconcern@gmail.com
Տնօրեն՝
Վ. Գևորգյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 6
«25» «03» 2024 թ.
N ԵԴ-07-2024 պայմանագրի

Կազմակերպություն
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պետական մարմին
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.